ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պարբերական հրապարակումների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.04.2020թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Մամիկոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Բալյան /գնահատող/

Վ.Գրիգորյան /գնահատող/

Կ.Բաբայան /բացող/

Տ.Գալստյան/բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	«ՄՈԱ» ՍՊԸ	moaspy@mail.ru
2	«ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ	bnaget@yahoo.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«ՄՈԱ» ՍՊԸ		«ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	9742500	—	—	—	—
2	9742500	—	—	—	—
3	9742500	5770000	6924000	—	—
4	9742500	—	—	—	—
5	9742500	—	—	9450000	9450000
6	9768000	—	—	—	—

6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին

6.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 2020թ մայիսի 4-ին ժամը 11:15-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.05.2020թ ժամը 11:15-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Մամիկոնյանգնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Բալյան/գնահատող/

Վ.Գրիգորյան/գնահատող/

Կ.Բաբայան /բացող/

Տ.Գալստյան/բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սիմոնյան

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

7.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

8.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը.

«ՄՈԱ» ՍՊԸ-ին և «Բնագետ» ՍՊԸ-ին հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

9.1 Հանձնաժողովի հաջորդ՝ միաժամանակյա բանակցությունների նիստն անցկացնել 2020թ մայիսի 6-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 06.05.2020թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գ. Մամիկոնյանգնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Բալյան/գնահատող/
	Վ. Գրիգորյան/գնահատող/
	Կ. Բաբայան /բացող/
	Տ. Գալստյան/բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Սիմոնյան

Բացակայում էին «ՄՈԱ» ՍՊԸ-ի և «ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ -ի ներկայացուցիչները

10. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

10.1 «ՄՈԱ» ՍՊԸ-ի և «ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ -ի ներկայացուցիչների բացակայության պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով վերջիններիս կողմից էլեկտրոնային փոստին ներկայացված գնային առաջարկները անփոփոխ թողնելու մասին ծանուցումները, մասնակիցների հայտով ներկայացված գնային առաջարկները թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

11. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

11.1 Հաշվի առնելով, որ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64 ծածկագրով ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցով հստակ պահանջ է ներկայացվել, որ ամսագրերը պետք է ներառված լինեն Բարձրագույն որակավորման կոմիտեի /ԲՈԿ/ կողմից երաշխավորված պարբերականների ցանկում, ինչպես նաև այն, որ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների նկարագրերից հստակ չէ ապահովված է արդյոք այդ պահանջը, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով պահանջել մասնակիցներից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հավաստումներ առաջարկող պարբերակների՝ ԲՈԿ ի ցանկում ընդգրկված լինելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

12. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

12.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020թ մայիսի 11-ին, ժամը 14:15-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 11.05.2020թ. ժամը 14:15-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գ.Մամիկոնյանգնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Բալյան/գնահատող/
	Վ.Գրիգորյան/գնահատող/
	Կ.Բաբայան /բացող/
	Տ.Գալստյան/բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Սիմոնյան

13. Մասնակիցների ներկայացրած հավատումների մասին.

13.1 07.05.2020թ.մասնակիցները էլեկտրոնային եղանակով ծանուցվել են հավաստիացում ներկայացնելու պահանջի մասին:

13.1.1 «ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 08.05.2020թ,ներկայացրել է հավաստիացում և համապատասխան հղումը «Բնագետ» պարբերականի՝ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված պարբերականների ցանկում ընդգրկված լինելու վերաբերյալ:

13.1.2 «ՄՈԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հավստիացում չի ներկայացրել, սակայն սահմանված ժամկետից հետո՝ 09.05.2020թ. ներկայացրել է պարզաբանում, ըստ որի պարզ է դառնում, որ վերջինիս կողմից տեղի է ունեցել թյուրըմբռնում և ապրանքի ամբողջական նկարագրով (Հավելված 1.1) ներկայացված պարբերականը ընդգրկված չէ ԲՈԿ-ի ցանկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

14 Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման գործընթացի մասին.

14.1 Վերանայելով սույն արձանագրության 7.1 կետում արձանագրվածը և հիմք ընդունելով սույն արձանագրության 13-րդ կետը, արձանագրել, որ.

14.1 .1 «ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին;

14.1.2 «ՄՈԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,մասնավորապես՝ Հավելված 1.1-ում տրամադրված տեղեկատվությամբ ապահովված չէ հրավերով սահմանված պահանջը;

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

14.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 10.1 և 14.1 կետերը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

15. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած ինչպես նաև մերժված մասնակցի վերաբերյալ.

15.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 5-րդ չափաբաժնի մասով «ԲՆԱԳԵՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած (ընտրված) մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

15.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 14.1.2 կետը՝ «ՄՈԱ» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

16. Գնահատման արդյունքների մասին

16.1 Թիվ 5 չափաբաժնի համար հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

16.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը Թիվ 1,2,4,6 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած,ոչ մի հայտ չներկայացվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

16.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը Թիվ 3 չափաբաժնի մասով հայտարարել չկայացած,հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Գ.Մամիկոնյան/նախագահ/

---------- Ա.Բալյան

---------- Վ.Գրիգորյան

---------- Կ.Բաբայան

---------- Տ.Գալստյան

---------- Ա. Սիմոնյան /քարտուղար/